

Հարցաթերթ

Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի հանրապետական փուլի

2023-2024 ուս. տարի

/տևողությունը – 120 րոպե/

10 – րդ դասարան

1. Պնդումներից յուրաքանչյուրի համար նշել՝ ճիշտ է, թե՛ սխալ

2միավոր

ա. ՀՀ երկաթուղային տրանսպորտի տեսակարար կշիռը բեռնաշրջանառության կառուցվածքում մեծ է ուղևորաշրջանառության կառուցվածքում ունեցած կշռից

բ. ՀՀ օդային տրանսպորտի տեսակարար կշիռը բեռնաշրջանառության կառուցվածքում մեծ է ուղևորաշրջանառության կառուցվածքում ունեցած կշռից

գ. ՀՀ ավտոմոբիլային տրանսպորտը առաջատար է և բեռնաշրջանառությամբ և ուղևորաշրջանառությամբ

դ. ՀՀ բեռնափոխադրումների ընդհանուր ծավալում ավտոմոբիլային տրանսպորտի տեսակարար կշիռը մեծ է խողովակաշարային տրանսպորտի կշռից

ե. Ինչպես օրվա փոփոխության, այնպես էլ 24-րդ ժամային գոտու կենտրոնական միջօրեականի ընտրությունը համընկնում են կիսագնդերի բաժանարար միջօրեականներին

զ. Տեղական ժամանակը սահմանվում է ժամային գոտու կենտրոնական միջօրեականի գոտիական ժամանակի միջոցով

է. Օրվա փոփոխության գծի շուրջ գտնվող պետությունները ինքնուրույն են որոշում՝ գծի որ կողմում լինել

ը. Հայաստանում արևի ամենաբարձր դիրքը ժամը 13:00-ին է գրանցվում:

2. Ի՞նչ են նշանակում եզրույթներից յուրաքանչյուրը

1միավոր

ա. ցանքաշրջանառություն

բ. իզոհիալ

3. Նկարագրով որոշել պետությունը

1միավոր

Այս ներցամաքային դիրք ունեցող հանրապետությունը Արևմտյան եվրոպայում ամենամեծ անտառապատվածությունն ունի: Սահմանակից է ութ երկրների: Հանդիսանում է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության հիմնադիրներից:

4. Ինչպե՞ս են կոչվում.

ա. բոլոր կողմերից միևնույն երկրի տարածքով շրջապատված քաղաքական միավորները կամ երկրները

1միավոր

բ. նախկին երկրաբանական ժամանակահատվածներին բնորոշ, սակայն մինչ այժմ պահպանված բույսերն ու կենդանիները

1միավոր

5. Խնդիրներ

ա. Հս.լ. 24°; արմ.ե. 10° կոորդինատներում գտնվող կետում տեղի է ունեցել նավաբեկություն, որին ամենամոտ փրկարարական կայանը գտնվում է 180° ազիմուտով 2° հեռավորության վրա: Հաշվի առնելով, որ կայանի ենթակայության ներքո գտնվող փրկարարական ուղղաթիռի թռիչքի միջին արագությունը 148 կմ/ժամ է, քանի րոպեում այն կհասնի օգնության:

1միավոր

բ. 1:500 000 մասշտաբի քարտեզի վրա հորիզոնականների կտրվածքը 100մ է և պատկերված է գետ, որի երկարությունը քարտեզում 10սմ է, իսկ գետաբերանի և ակունքի բարձրությունների տարբերությունը՝ 5 հորիզոնական: Որոշել գետի թեքությունը:

1միավոր

6. Ելնելով ՄԱԿ-ի պաշտոնական տեղեկագրի տվյալներից՝ գծեք Եվրոպայի բնակչության տարիքային կազմի սյունաձև տրամագիրը 1950թ. և 2020թ. համար (1միավոր) և պատասխանեք հարցերին (յուր.՝ 1միավոր):

Տարեթիվ	Տարիքային խումբ								
	0-9	10-19	20-29	30-39	40-49	50-59	60-69	70-79	80+
1950թ.	93	98	93	72	74	54	38	21	6
2020թ.	79	78	85	105	104	104	91	60	40

Ցանկալի է, որ տրամագրի ուղղահայաց առանցքին ներկայացված լինի բնակչության թիվը, իսկ հորիզոնական առանցքին՝ տարիքային խմբերը: Երկու տարեթվերի տվյալները տարբերակելու համար կարող եք օգտագործել սյունների ներքին գունավորման կամ շտրիխավորման տարբեր ձև **ա.** Փոփոխությունների հիման վրա նշել տարեթվերի միջև ժողովրդագրական մեկ միտում **բ.** Ո՞րն էր 1950թ.-ի տվյալներում 10-19 տարեկան խմբից հետո դիտվող անկման գլխավոր պատճառը

7. Դասավորել ինքնիշխան պետությունները ըստ աշխարհի քաղաքական քարտեզի վրա ի հայտ գալու ժամանակագրության՝ հնից դեպի նորը. ԱՄՆ, Արևելյան Թիմոր, Ղազախստան, Ման Մարինո 1 միավոր


8. Բացատրել՝ հարցադրումներից յուրաքանչյուրի համար ներկայացնելով երկու հիմնավոր պատճառ

ա. Եվրոպայի տարածքում քանի էներգետիկական վերջին տարիներին բավական ինտենսիվ է զարգանում: Հզորությամբ առանձնանում են հատկապես ծովափնյա գոտում տեղակայվող կայանները: Ինչու՞ է այդպես 1 միավոր

բ. Չնայած Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի տարվա ընթացքում տևական սառցապատմանը, ջրային կյանքը այստեղ «եռում է»: Ինչու՞ 1 միավոր

9. Դիտարկեք միտումը և պատասխանեք հարցերին

Չինաստանի բնական աճի փոփոխության միտումը 1990-2023թթ. ժամանակահատվածում



ա. Առաջիկա տասնամյակում ինչպե՞ս է փոփոխվելու Չինաստանի աշխատանքային ռեսուրսների քանակը (0.5 միավոր) և ինչու՞ (0.5 միավոր)





բ. Ի՞նչ է ժողովրդագրական քաղաքականությունը (0.5 միավոր) և ի՞նչ փոփոխություններ է այն կրել Չինաստանում վերջին տարիներին (0.5 միավոր)

10. Նշել պատասխանը և հիմնավորել

ա. Վերին լճի ջրաջերմային պայմանները կլիմայի գլոբալ փոփոխություններին արձագանքում են մոտ 200 տարի ուշացմամբ: Ինչու՞ 1 միավոր

բ. Գոյություն ունե՞ն արդյոք նույն կիսագնդում գտնվող երկու գետեր, որոնք ունենան տարբեր սնուցում, սակայն վարարեն ամռանը: Ներկայացնել փաստական հիմնավորում 1 միավոր

11. Համապատասխանեցնել նկարներում ներկայացված Ա-ից Դ պրոյեկցիաները հետևյալ տեսակներին. ազատ, հավասարամեծ, հավասարանկյուն (օր.՝ Ա-համապատասխան տեսակ)



Առարկայական հանձնաժողովի նախագահ՝ Վ. Ասատրյան